ԱՐՁԱՆ ՊԵՏՐՈՍ ՇԱՆՇԵԱՆՑԻՆ

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը.

Հանգուցեալ Պետրոս Շանշեանցին լարգողների մի խումբ, ցանկալով լաւէրժացնել նորա միշատակը, իբրև հասարակութեան մի ընտիր ու ազնիւ գործիչի և ճշմարիտ քրիստոնէի կատարեալ տիպարը իւր մէջ մարմնացնող մի անհատի՝ ընտրել է իւր միջից մի մասնաժողով, որ հոգալու է այս նպատակի իրագործման համար—մահարձան կանգնեցնելով նորա շիրմի վերայ և կենսագրութիւնը նորա կենդանագրով հրատարակելով. Հարկաւոր ծախքերը ծածկելու համար մտադրութիւն կայ ժողովարարութեան դիմելու թէ Տփխիսում և թէ դաւառներում. ցանկալի էր, որ հայ հասարակութիւնը չը զլանար իւր նպաստը այնպիսի մի անզուգական հայի և քրիստոնէի միշատակի լաւէրժացնելու ձեռնարկութեանը՝ իւր աջակցութեամբ և առատաձեռնութեամբ։

Մասնաժողովի նախագահ ընտրուած է պ. Մարկոս Դոլուխանեան, անդամներ՝ արժանապատիւ հարք—տէր-Արսէն Բագրատունի և տէր-Սահակ Սահակեանց և պ. պ. բժշկապետ Մալսուրեանց, Յակոբ Տիգրանեանց և Բագրատ Միրիմանեանց։

Յարգելի ժողովարարներին խնդրում է հանգանակուած գումարները ուղարկելու Տփխիսի հայ լրագրութեանց խմբագիրներին և կամ մասնաժողովի գանձապահ պ. Յակոբ Տիգրանեանցին՝ Տփխիսի քաղաքային վարչութեան հասցէով։

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑԻ 30-ԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Վիպասան պ. Պերճ Պռօշեանցի տաղանդը և երկարամեայ գործունէութիւնը լարգողներին կարող ենք լայտարարել, որ նշանաւոր վիպասանի և գործիչի 30-ամեայ յօբելեանը արժանաւոր կերպով տօնելու համար նախապատրաստութիւնները տեսնում են։ Պ. Պռօշեանցին լարգողների մի խումբ, այս լունիսի 8-ին, հաւաքուեց պ. Դէորգ Զմշկեանի մօտ՝ այդ խնդրի մասին խորհրդակցելու և վճռեց կազմել կարգադրիչ մասնաժողով, որի անդամներ խնդրուած են լինելու՝

պ. պ. Սունդուկեանց Գաբրիէլ
Զմշկեան Դէորգ
Երիցեան Ալէքսանդր
Տիգրանեան Յակոբ
Եզեկեան Աւետիք
Սարգսեան Լեոն
Ենգիբարեան Գարեգին